

PROTOCOL OF THE

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**EBA ROUND TABLE DISCUSSION ON TAX
ADMINISTRATION AND LEGISLATION**

Yerevan, 20th of November, 2019

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆԱՊՐՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՉ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ**

Երևան, Նոյեմբերի 20, 2019 թ.

On November 20th, the European Business Association initiated a regular discussion between the public and private sectors on the topic of "Tax Administration and Legislation" within the framework of the EU-funded project "Strengthening EU Business Development in Armenia". The discussion was held by EBA members, EBA partner organizations (indirect members of EBA), top officials of the tax administration and legislation development sector, particularly RA Ministry of Finance, RA State Revenue Committee, RA Ministry of Economy, as well as representatives of WB, IMF other stakeholders.

The discussion agenda was mainly focused on the changes in the tax legislation, which are expected in next year. However, professional questions of the interested stakeholders, who attended the event, were also discussed.

Thus, the first part of the discussion was devoted to the provisions of the Tax Code adopted in June of this year and effective from January 1, 2020. Particularly Mr. Arman Poghosyan, Deputy Minister of Finance of the RA, underlined the importance of the expected shift from the five-tier tax system to the three-tiered tax system, which means that instead of the former self-employed taxpayers, family business taxation and patent tax systems, we will have a "micro-enterprise" tax system with a common tax / profit tax system, VAT together. At the same time, one of the prerequisites for qualifying an economic activity as a micro-enterprise is the realization of activity in the defined sphere and the non-exceeding annual turnover of 24 million AMD.

The next change in the tax legislation concerns the reduction of interest rates on certain types of taxation, the leveling of income tax and the creation of equal conditions for non-residents. So, Mr. A. Poghosyan noted that the amount of income tax is reduced by 2% to 18%, income tax is leveled, and irrespective of the amount of income, it is set at 23%, which will be reduced to 20% year by year. In order to promote investment, tax legislation defines that non-residents will pay a dividend tax equal to the residents of 5% instead of the previous 10%. And the loss of potential tax revenue is offset by an increase in excise tax rates.

Other changes were also presented and discussed with the above mentioned, as well as a reference was made to export incentives, emphasizing that the latter is behind domestic consumption, even though exports are exempt from indirect taxes. In particular, it was emphasized that as a

Սույն թվականի նոյեմբերի 20-ին ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում ԵՄ բիզնեսի զարգացման ուժեղացում» նախագծի շրջանակներում Եվրոպական բիզնես ասոցիացիայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հերթական քննարկումը հանրային և մասնավոր հատվածների միջև, այս անգամ «Հարկային վարչարարության և օրենսդրության» թեմայով: Քննարկումը տեղի ունեցավ ԵԲԱ անդամների, ԵԲԱ գործընկեր կազմակերպությունների /ԵԲԱ անուղղակի անդամներ/, հարկային վարչարարության և օրենսդրության զարգացման ոլորտի պետական մարմինների՝ ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ՀԲ-ի, ԱՄՀ-ի՝ ոլորտի պատասխանատու ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ:

Քննարկման օրակարգը հիմնականում կազմվել էր հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների շուրջ, որոնք սպասվում են 2020 թվականի հունվարի 1-ից: Սակայն ընդհանուր քննարկման առարկա դարձան նաև միջոցառմանը ներկա գտնվող շահագրգիռ անձանց հետաքրքրող՝ ոլորտին առնչվող մասնագիտական հարցադրումները:

Այսպես, քննարկման առաջին հատվածը նվիրված էր սույն թվականի հունիս ամսին ընդունված և 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող հարկային օրենսգրքի դրույթներին, մասնավորապես, ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանը սպասվող փոփոխություններից իր կարևորությամբ ընդգծեց հարկային հնգաստիճան համակարգից եռաստիճան համակարգի անցումը, այսինքն՝ նախկին ինքնազբաղ անձանց, ընտանեկան ձեռնարկատիրության հարկման և արտոնագրային հարկով հարկման համակարգերի փոխարեն, ունենալու ենք «միկրոձեռնարկատիրություն» հարկման համակարգ՝ ընդհանուր հարկման /շահութահարկ, ԱԱՀ/ և շրջանառության հարկով հարկման համակարգերի հետ միասին: Ընդ որում, տնտեսական գործունեությունը միկրոձեռնարկատիրություն որակելու համար անհրաժեշտ վավերապայմաններից են՝ սահմանված ոլորտում գործունեության իրականացումը և 24 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառության շեմը չգերազանցելը:

Հարկային օրենսդրությամբ նախատեսվող հաջորդ փոփոխությունը վերաբերում է առանձին հարկատեսակների մասով տոկոսադրույթների նվազեցմանը, եկամտային հարկի համահարթեցմանը և ոչ ռեզիդենտի համար հավասար պայմանների ստեղծմանը: Այսպես, պարոն Ա. Պողոսյանը նշեց, որ շահութահարկի գումարը նվազեցվում է 2 տոկոսով

result of this mechanism and the return of the indirect tax debits, Armenia has improved its position in the international assessment scales of the sector, for example, within the framework of "Doing Business" the index of Armenia has improved by 30 indexes, moving from 82nd to 52nd place.

The second part of the discussion focused on the future strategy in the field of taxation, which develops in the following main approaches: tax policy should be "demanded", tax policy should be ordered, clear objectives and goals should be emphasized. In this regard, it is recommended that individual sectors of the economy form their substantive need and demand for tax policy and submit a proposal to resolve them with some tax instrument. This is new in tax policy, and it is likely that those involved in the sector will follow this way. The next direction is the restriction of tax privileges. It is suggested to replace general, unaddressed tax privileges with targeted, sector-specific privileges to serve its purpose of promoting economic growth and development of the sector. It is suggested to grant privileges to prospective sectors in Armenia, not to any economic activity. Due to this, the ways in which the Armenian business has a competitive advantage will be encouraged and developed. In addition, tax privileges should not be indefinite.

The next strategic direction connected with the clarification of tax systems. During the meeting, the transition from the five-tier tax system to the three-tier system was emphasized, highlighting the need for their further revision. In particular, regulations will be adopted that will lead to the transition from the turnover taxation system to the general taxation system.

The next strategic direction is the equivalent taxation of visible wealth. This is about revising real estate cadastral values, approximating them to market values, and determining the real estate tax base at revised value.

The last major strategic direction is the development of an income declaration system. The point is especially about the introduction of a simplified self-declaration mechanism and toolkit that will also allow for cost savings.

The next part of the discussion was about the tax administration itself. In particular, Mr. H. Muradyan, the representative of the SRC of the RA, highlighted the need to raise the level of awareness in tax relations. To ensure this, it was mentioned that it is planned to expand the call center of the RA SRC as a primary awareness measure for taxpayers. For ensuring awareness, written awareness access was emphasized, hence, the answers provided by the SRC to the taxpayers' written inquiries will be posted on the website and will be accessible to all without identification of questioner.

As a result, it is foreseen in the future that there will be no unanswered question about the application and interpretation of tax legislation. Mr. Muradyan emphasized that the tax body also plans to make changes in the tax liability system, especially in connection with the violation of the rules on the use of cash registers, by establishing uniform size of fine. The next planned activity is the addition of the stamp list. The focus of the tax authority is also on compliance with tax legislation requirements during the reorganization of organizations.

դառնալով 18 տոկոս, եկամտային հարկը համահարթեցվում է, և անկախ եկամուտի չափից՝ սահմանվում է 23 տոկոս, որը տարեցտարի նվազմամբ հասցվելու է 20 տոկոսի: Օտարերկրյա ներդրումների խթանման նպատակով՝ հարկային օրենսդրությամբ սահմանվում է, որ ոչ ռեզիդենտները վճարելու են ռեզիդենտների հետ հավասար շահաբաժնի հարկ՝ 5 տոկոս նախկին 10 տոկոսի փոխարեն:

Իսկ վերոգրյալ նվազեցումների արդյունքում հնարավոր հարկային եկամուտների կորուստը փոխհատուցվելու է ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացմամբ:

Վերոգրյալի հետ համատեղ ներկայացվեց և քննարկվեց կատարված այլ փոփոխություններ ևս, ինչպես նաև անդրադարձ կատարվեց արտահանման խրախուսման քաղաքականությանը՝ ընդգծելով, որ վերջինս զիջում է ներքին սպառմանը, չնայած որ արտահանումը ազատված է անուղղակի հարկերից: Մասնավորապես ընդգծվեց, որ այս մեխանիզմի և անուղղակի հարկերի դեբետային գումարների վերադարձման արդյունքում Հայաստանը բարելավվել է իր դիրքերը ոլորտի միջազգային գնահատման սանդղակներում, օրինակ՝ «Doing Business»-ի շրջանակներում ՀՀ ցուցանիշը բարելավվել է 30 ինդեքսով՝ 82-րդից հասնելով 52-րդի:

Քննարկման երկրորդ հատվածը վերաբերում էր հարկային ոլորտի սպազա ռազմավարությանը, որը զարգանում է հետևյալ հիմնական մոտեցումների շրջանակներում. նախ, հարկային քաղաքականությունը պետք է լինի «պահանջված», պետք է պատվեր իջեցվի հարկային քաղաքականությանը, պետք է հստակ խնդիրները և նպատակներն ընդգծվեն: Այս կապակցությամբ առաջարկվում է տնտեսության առանձին ճյուղեր ձևավորեն իրենց հիմնավորված կարիքը և պահանջը հարկային քաղաքականության նկատմամբ և ներկայացնեն դրանք որևէ հարկային գործիքակազմով լուծելու առաջարկություն: Սա նորույթ է հարկային քաղաքականության մեջ, և, հավանաբար, ոլորտի պատասխանատուները կգնան այդ ճանապարհով: Հաջորդ ուղղությունը հարկային արտոնությունների սահմանափակումն է, այսինքն՝ առաջարկվում է ընդհանուր, անհասցե հարկային արտոնությունները փոխարինել հասցեական, ոլորտային արտոնություններով, որպեսզի վերջինս ծառայի իր նպատակին՝ խթանի տնտեսական աճը և ոլորտի զարգացումը: Առաջարկվում է արտոնություններ տալ Հայաստանի պայմաններում հեռանկարային ոլորտներին, այլ ոչ թե ցանկացած տնտեսական գործունեության: Նման կերպ կխրախուսվեն և կզարգացվեն այն ուղղությունները, որտեղ Հայաստանի տնտեսվարողն ունի մրցակցային առավելություն:

Բացի այդ՝ չպետք է հարկային արտոնությունները լինեն անժամկետ:

Ռազմավարական հաջորդ ուղղությունը վերաբերում է հարկային համակարգերի հստակեցմանը: Հանդիպման ընթացքում կրկին ընդգծվեց հնգաստիճան հարկման համակարգից եռաստիճան համակարգի անցումը՝ շեշտադրվելով դրանց հետագա վերանայման անհրաժեշտությունը: Մասնավորապես, սահմանվելու են այնպիսի կարգավորումներ, որոնք կհանգեցնեն շրջանառության հարկից ընհանուր հարկման համակարգի անցման:

Հաջորդ ռազմավարական ուղղությունը տեսանելի

Then, representatives of the World Bank (WB) and the International Monetary Fund (IMF) conduct presentations on the key indicators of their monitoring in the RA tax field. The importance and continuity of the activities carried out with the support of the latter were highlighted. At the end of the discussion, there was a question and answer session between the representatives of business sector and state bodies on the aforementioned issues, as a result of which the already transmitted information was reinforced and the approaches voiced were clarified. Summarizing the aforementioned, it can be noted that competent officials have in fact presented expected approaches to the tax policy, strategy and administration, thus making predictable the regulations of the tax legislation in the near future.

հարստության համարժեք հարկումն է: Այստեղ խոսքը վերաբերում է անշարժ գույքի կադաստրային արժեքների վերանայմանը՝ դրանք շուկայական արժեքներին մոտարկմանը և վերանայված արժեքով անշարժ գույքի հարկի բազայի որոշմանը:

Ուսումնասիրական վերջին հիմնական ուղղությունը եկամուտների հայտարարագրման համակարգի զարգացումն է: Խոսքը հատկապես վերաբերում է ինքնահայտարարագրման պարզեցված մեխանիզմի և գործիքակազմի ներդրմանը, որը հնարավորություն կտա կատարելու նաև ծախսերի նազեցում:

Քննարկման հաջորդ հատվածը վերաբերում էր բուն հարկային վարչարարությանը: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչ պարոն Հ. Մուրադյանը շեշտադրեց հարկային հարաբերություններում իրազեկման մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Դա ապահովելու համար նշվեց, որ նախատեսվում է ընդլայնել ՀՀ ՊԵԿ զանգերի կենտրոնը /call centre/՝ որպես հարկ վճարողների առաջնային իրազեկման միջոց: Իրազեկման ապահովման համար ընգծվեց գրավոր իրազեկման հասանելիությունը, այսինքն՝ հարկ վճարողների գրավոր հարցումներին ՀՀ ՊԵԿ-ի կողմից արված պատասխանները, առանց հարցադրողի նույնականացման, տեղադրվելու են կայքում և հասանելի են լինելու բոլորին: Որպես արդյունք՝ կանխատեսվում է ապագայում ունենալ մի իրավիճակ, որում հարկային օրենսդրության կիրառման և մեկնաբանման շուրջ որևէ անպատասխան հարց չի լինի: Պարոն Մուրադյանն ընդգծեց, որ հարկային մարմինը նախատեսում է փոփոխություններ կատարել նաև հարկային պատասխանատվության համակարգում, հատկապես՝ ՀՌՄ կիրառության կանոնների խախտման առնչությամբ, սահմանելով տուգանքի միասնական չափեր: Հաջորդ նախատեսվող միջոցառումը դրոշմապիտակների անվանացանկի ավելացումն է: Հարկային մարմնի ուշադրության կենտրոնում է նաև հարկային օրենսդրության պահանջների պահպանումը կազմակերպությունների վերակազմակերպման ժամանակ:

Այնուհետև, ելույթ ունեցան Համաշխարհային բանկի /ՀԲ/ և Արժույթի միջազգային հիմնադրամի /ԱՄՀ/ ներկայացուցիչները՝ ներկայացնելով ՀՀ հարկային ոլորտում իրենց կողմից իրականացված մշտադիտարկման առանջին ցուցանիշները: Ընդգծվեցին վերջիններիս աջակցությամբ այս ոլորտում իրականացվող միջոցառումների կարևորությունն ու շարունակականությունը:

Քննարկման վերջում, վերոթվարկյալ հարցերի շուրջ տնտեսվարողների և պետական մարմինների ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ հարց ու պատասխան, ինչի արդյունքում, ևս մեկ անգամ ամրապնդվեց արդեն իսկ փոխանցված տեղեկատվությունը և հստակեցվեցին հնչեցված մոտեցումները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի նշել, որ իրավասու պաշտոնատար անձինք, ըստ էության, ներկայացրեցին հարկային քաղաքականության, ռազմավարության և վարչարարության սպասվելիք մոտեցումները՝ այդ կերպ կանխատեսելի դրաձնելով մոտ ապագայում հարկային օրենսդրության կարգավորումները: